ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

----------2014թ. **N--- Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի *70*-րդ հոդվածի *2*-րդ և *3*-րդ մասերով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու *2009* թվականի հունիսի *18*-ի «Երևան քաղաքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» *N 1*-Ն որոշման հավելվածը լրացնել 123.*1* կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«*123.1* Ավագանու հերթական նիստերի ավարտից հետո Խմբակցությունները կարող են անցկացնել ճեպազրույցներ հետևյալ ընթացակարգով՝

1) ճեպազրույցին մասնակցելու ցանկության դեպքում Խմբակցությունները և ԶԼՄ-ները՝ Ավագանու նիստից առնվազն 1 օր առաջ, գրավոր տեղեկացնում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությանը՝ նշելով ճեպազրույցին մասնակցող Ավագանու անդամների, ինչպես նաև ԶԼՄ-ների ներկայացուցիչների անուն-ազգանունները.

2) ճեպազրույցներին Խմբակցությունների մասնակցության հաջորդականությունը որոշվում է ըստ նրանց թվաքանակի՝ փոքրաթվից դեպի մեծաթիվ, յուրաքանչյուր Խմբակցությանը տրամադրելով առավելագույնը 20 րոպե ժամանակ.

3) ճեպազրույցները տեղի են ունենում Ավագանու հերթական նիստերին հաջորդող աշխատանքային օրը՝ ժամը 11.00–ից։ Այն դեպքում, երբ Ավագանու նիստին հաջորդող օրը ոչ աշխատանքային է, ապա ճեպազրույցը տեղի է ունենում նիստի ավարտից հետո.

4) Ճեպազրույցների անցկացման կազմակերպական աշխատանքները ((համապատասխան դահլիճով և տեխնիկայի միջոցներով ապահովում) իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչությունը.

5) ճեպազրույցը վարում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության ներկայացուցիչը, ով Ավագանու նիստի ավարտից հետո հայտարարում է ճեպազրույցի անցկացման տեղի և հերթականության մասին։»։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿ՝
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ՌԻԳՅՈԶԱԼՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի №1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույն որոշման նախագծի ընդունումը նպատակ է հետապնդում լրացուցիչ հնարավորություն ընձեռել Երևանի ավագանու խմբակցություններին և անդամներին ավագանու նիստերի օրակարգում ընդգրկված իրավական ակտերի նախագծերի քննարկման և քվեարկության արդյունքների վերաբերյալ ԶԼՄ–ների միջոցով հանրությանը ներկայացնելու իրենց արտահայտած դիրքորոշման վերաբերյալ ավելի մանրամասն պարզաբանումներ ու հիմնավորումներ, որը, իմ կարծիքով, կնպաստի ավագանու գործունեությունը դարձնելու առավել թափանցիկ և հանրության համար հնարավորինս մատչելի:

Նշված առաջարկը կատարվել է նկատի առնելով նաև խորհրդարանում գործող ճեպազրույցների անցկացման փորձը, դրա պահանջարկն ու անհրաժեշտությունը հանրության շրջանում:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿ՝

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ Ռ. ԳՅՈԶԱԼՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի №1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույն որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿ՝

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ Ռ. ԳՅՈԶԱԼՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի №1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույն որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և /կամ/ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿ՝

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ՌԴ. ԳՅՈԶԱԼՅԱՆ